

ԽԱՉՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԻՆԱ

Երևան քաղաքի պատմության թանգարան

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԸՍՏ
«ЭРИВАНСКИЕ ОБЪЯВЛЕНИЯ» ԹԵՐԹԻ (1883-1917 թթ.)

Բանալի բառեր՝ թերթ, հայտարարություններ, Երևան, ֆրանսիական մոտիվներ, հրատարակիչ, մամուլ, տպագրություն, լուրեր:

Keywords: newspaper, announcements, Yerevan, French motives, publisher, press, printing, news.

Երևանի պարբերական մամուլի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել «Երևանի հայտարարություններ» թերթիկը, որը լույս է տեսել 1883 թվականից: Նրա հրատարակիչ-խմբագիրը դերասան, հասարակական գործիչ, թատերագիր Էմին Տեր-Գրիգորյանն էր: Էմին Տեր-Գրիգորյանը քաղաքի ամենահայտնի անձնավորություններից մեկն էր, ինչի մասին վկայում է այն փաստը, որ նրան հասցեագրած նամակների վրա ուղղակի գրում էին՝ Երևան, Էմին Տեր-Գրիգորյանին, առանց հասցեն նշելու: Սկզբում թերթիկը փոքր ծավալով էր, կես թերթի չափով: Դրանում սովորաբար տպագրվում էին քաղաքային լուրեր, տեղեկություններ տեղական շուկայի և ապրանքների գների մասին նաև անեկղոսներ: Թերթիկը հայերեն լեզվով տպագրելու համար Էմին Տեր-Գրիգորյանը պարտավորվել էր դրա պարունակած նյութերը սահմանափակել նշվածներով: Սակայն թերթիկի հայերեն հրատարակվելու փաստը դարձավ պատճառ, որ ցարական գրաքննչական օրգանների զեկուցագրերի հիման վրա մամուլի գլխավոր վարչությունը 1885 թ. հրաման արձակի թերթիկը փակելու մասին [Հակոբյան, 1963, 435]:



Թերթիկի հրատարակությունը ընդհատվում է ավելի քան 15 տարի: Տեր-Գրիգորյանը չէր հրաժարվել թերթ հրատարակելու մտադրությունից: Այս անգամ նա արդեն առաջ է քաշում թերթը ռուսերենով հրատարակելու հարցը: Այդպիսի զիջման գնով Տեր-Գրիգորյանին հաջողվում է 1900 թ.-ից մինչև 1917 թ. որոշ ընդհատումներով վերսկսել թերթիկի հրատարակությունը «Эриванские объявления» անունով: Սկզբում թերթիկը լույս

է տեսնում միայն ռուսերեն լեզվով և նրա բովանդակած նյութերը բաղկացած էին միայն տարբեր բնույթի հայտարարություններից, իսկ 1909 թվականից թերթը մշտապես դառնում է երկլեզվյան՝ հայերեն-ռուսերեն: Հայտարարություններից բացի սկսում են տպագրել նաև զանազան նյութեր քաղաքի կյանքից: Տպաքանակը 1000-3000 էր [Նույն տեղում, 436]: Յուրաքանչյուր հայտարարություն տպագրվում էր 10 կոպեկով, իսկ թերթը քաղաքացիներին տրվում էր անվճար:

«Երևանի հայտարարություններ» թերթը հարուստ շտեմարան է քաղաքային իշխանության գործունեության, երևանցիների կենցաղի, ժամանցի, առևտրի, առողջապահության և այլ ոլորտների վերաբերյալ: Ինչպես պարզվում է, թերթում կան նաև հետաքրքիր տեղեկություններ՝ Ֆրանսիային և ֆրանսերենին առնչվող: Խոսքը վերաբերվում է մասնավորապես հյուրանոցների, կինոթատրոնների, առևտրասրահների ֆրանսերեն կամ Ֆրանսիայի քաղաքների անուններով անվանումներին, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ ֆրանսիական մոտիվները լայնորեն արտահայտվել են երևանցիների կենցաղում: Պետք է նշել, որ այս տեսանկյունից, երբևէ «Երևանի հայտարարություններ» թերթին անրադարձ չի եղել:

20-րդ դարի սկզբին Երևանում գործում էր 11 հյուրանոց, որոնք բոլորն էլ մասնավոր էին, նրանցից մի քանիսն ունեին «Լիոն», «Ֆրանսիա», «Մարսել», «Գրանտ հոթել», «Օրիանտ» հինգեղ անվանումներ: Երևանում այս և մյուս հյուրանոցների ի հայտ գալը պայմանավորված էր՝

1. Արդյունաբերական, առևտրական և ֆինանսական ձեռնարկությունների ընդլայնմամբ,

2. Քաղաքի բնակչության թվի ավելացմամբ,

3. Երկաթուղու կառուցմամբ,


4. Մշակույթի ընդհանուր մակարդակի բարձրացմամբ:

Հյուրանոցների համար առանձին շենքեր չէին կառուցվում: Սովորաբար հյուրանոցների էին վերածվում նորակառույց շենքերի առանձին սենյակներ կամ ամբողջական հարկեր: Օրինակ, «Գրանտ հոթել» հյուրանոցը գտնվում էր Աստաֆյան (այժմ Աբովյան փողոց) N 7 տան երկրորդ հարկում:

Քաղաքի առաջին և ամենահայտնի հյուրանոցը «Օրիանտն» էր, այն պատկանում էր Գևորգ Խաչատրյանին և գտնվում էր այժմյան կառավարական նոր շենքի բակում (Վազգեն Սարգսյան 3):

«Լիոն» հյուրանոցը գտնվում էր նախկին Տեր-Ղուկասովի, այժմ Նալբանդյան փողոցի N 28 տանը: Դա մեկհարկանի կառույց էր, դեպի փողոց նայող 5 պատուհաններով: Կտուրի հատվածում տեղադրված էր «Лионъ» ցուցանակը: Հյուրանոցի նկուղային հարկում գործում էր Ա. Յալալովի գինու պահեստը, որն ուներ հետաքրքիր գովազդային ցուցանակ՝ «Ով ուզում է լինել առողջ, թող խմի բարձր պարզներ՝ ոսկե մեղալ և գրանդ-պրի շքանշան ստացած Ռիզայի «Սոլոսեկտ» շամպայնը, գինը 80 կոպեկ»:

«Մարսել» հյուրանոցը գտնվում էր Աստաֆյան փողոցի մի մասնավոր տան մեջ, իսկ Մկրտիչ Նալբանդյանին պատկանող «Ֆրանսիա» հյուրանոցը՝ քարավանատան երկրորդ հարկում:



1911 թ. «Ֆրանսիա» հյուրանոցի տակ բացվել էր Տուլայի արհեստանոցը, որտեղ նիկելապատում էին ինքնատեղերը: Թվարկված հյուրանոցներն ի տարբերություն նախկինում նույն նպատակներին ծառայող շենքերի, կառուցված էին ճարտարապետների նախագծած և քաղաքային վարչության կողմից հաստատված հատակագծերի հիման վրա: Նշենք, որ չնայած այս ամենին, հյուրանոցները չունեին իրենց ամպագոռգոռ անուններին համապատասխան հարմարությունները:

Հաջորդը առևտրի սրահներն են ու խանութները, որոնցից հայտնի էին Աստաֆյան 23 հասցեում գործող «Փարիզի նորություններ» կանացի գլխարկների և «Վեներա» նորաձևության խանութները: Այսպես, թերթի համարներից մեկում կարդում ենք. «կապված առևտրի կանգի հետ, «Փարիզի նորություններ» խանութում գներն իջեցված են մինիմումի» [Эриванские объявления, 1909 г., N 10], իսկ մյուս հայտարարությունում նշվում է, որ խանութը բոլոր տեսակի գլխարկները և կտորները վաճառում են 50 % զեղչով [Эриванские объявления, 1911 г., N 5]: Հետաքրքիր է 1913 թ. N 62-ում արված հայտարարությունը, որտեղ հանրությանը տեղեկացվում է, որ «Պարիժանկա» նորաձևության արհեստանոցը /Աստաֆյան-Ցարսկայա փողոցների անկյան N 25 շենքում/ ընդունում է կանանց և երեխաների զգեստների պատվերներ: Արհեստանոցը պատկանում էր Նատալյա Տեր-Արիստակեսյանին: Մեկ այլ հայտարարությունից տեղեկանում ենք, որ արհեստանոցը ստացել էր հատուկ սարքավորումներ և նյութեր

Թավիշի վրա նրբագեղ աշխատանքների կատարելու համար [Эриванские объявления, 1911 г., N 31]:



20-րդ դարասկզբին Երևանում գործում էին նաև դեղատներ, հիվանդանոցներ, անհատ բժիշկների մասնավոր բուժարաններ, որոնցից նշված թեմայի հետ կապ ունեցողներից կարելի է նշել ֆրանսիացի բժիշկ Բրոն Իվ. Ռուսոյին [Эриванские объявления, 1911 г., N 5]: Նա կատարում էր վիրաբուժական միջամտություն և մեղասեռական հիվանդությունների գծով հիվանդներին ընդունում էր ամեն օր, երեկոյան ժամը 17⁰⁰-20⁰⁰: Նշվում է նաև կին ատամնաբույժ Ֆ. Շալիբոյի մասին, ով հիվանդներին ըստ կրոնական պատկանելության, ընդունում էր տարբեր ժամերի՝ առավոտյան 9-11-ը մահմեդականներին, մնացած ժամերին՝ քրիստոնյաներին:

Կենցաղային թեմայից հիշատակում կա «Բոմոնդ» ճաշարանի մասին, որը գտնվել է Բուլվարի դիմաց: Հայտարարության մեջ նշվում է, որ ճաշարանին «Անհրաժեշտ են արական և իգական սեռերի սպասավորներ, նաև մի հմուտ խոհարար»:

Հանրապետության հրապարակի շատրվանների տարածքում նախկինում կար մի ամառային ռեստորան ֆրանսիական «Փթի Շան» անունով, որը նշանակում է «Փոքրիկ հավաքատեղի»։ Ի դեպ, Փարիզում պահպանվել է նմանատիպ անվանումով փողոց, որը հատնի է իր սրճարաններով։ Հավանաբար հենց այս փարիզյան փողոցի հետ էլ կապված էր այդ ռեստորանի անվանումը։ «Փթի Շան» ռեստորանը բավականին բարեկարգ էր և գտնվում էր բանուկ վայրում։ Ռեստորանը հատկապես սիրված էր մտավորականների կողմից։ «Երևանի հայտարարություններ» թերթից իմանում ենք, որ «Մովսես» սրահում սանրվածքներն արվում են Փարիզի վերջին նորաձևության ամսագրերով և շատ մատչելի գներով։ Կանանց սանրվածքը՝ 1 ռուբլի։

Թերթի տարբեր համարներում կարելի է հանդիպել ֆրանսերեն լեզվի դասավանդման վերաբերյալ հայտարարությունների. «Կամենում եմ տալ ֆրանսերենի

1911 թ. N 60 թերթում հանդիպում ենք մի ուշագրավ հայտարարության, որում հաղորդվում էր, որ միայն երկու օր՝ «օգոստոսի 30-ին և 31-ին երեկոյան ժամը 20-23 նախկին քաղաքային ակումբում, Ջանփոլադյանի շենքում նվագախմբի մասնակցությամբ կցուցադրվի բնության հրաշք-աղջիկը, որի մի կեսը մարդ է, մյուսը՝ կապիկ: Տոմսերի արժեքը՝ 20 կոպեկից - 1 ռուբլի: Բնության այս հրաշքը Երևան էին հասցրել Փարիզից, որտեղ էլ ուսումնասիրվել էր առաջատար մասնագետների կողմից» [Эриванские объявления, 1911 г., N 60]:



Հայտարարություններից տեղեկանում ենք նաև, որ Թիֆլիսում Ֆրանսիայի դեսպանը 1911 թ. հոկտեմբերին նամակ է ուղարկում հայ քաղաքական գործիչ, ապագայում Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար՝ Ա.Բ. Խատիսյանին: Նամակում դեսպանը ֆրանսիացի գործարարների անունից առաջարկում է կնքել 15 միլիոն ռուբլի փոխառություն տալու պայմանագիր:

Մի հետաքրքիր տեղեկատվություն ևս. 20-րդ դարասկզբին Երևանում շատ նորաձև էին ֆրանսիական «բուդուարային», կամ «մահճակալային» տիկնիկները, որոնք զարդարում էին կանանց հանդերձասենյակները: Նման տիկնիկների թիվս բազմաթիվ արդուզարդի պարագաների, կարելի էր ձեռք բերել «Նադեժդա» խանութից:



Ահա այսպիսին էր ֆրանսիայի «ներկայությունը» 19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկզբի Երևանում ըստ «Эриванские объявления» թերթի:

SUMMARY

The “Yerevan Announcements” newspaper, published since 1883, played an important role in the history of Yerevan's periodical press. Its publisher and editor was actor, public figure, and playwright Emin Ter-Grigoryan. The newspaper was published with some interruptions until 1917, initially only in Russian, and from 1909 it became consistently bilingual, in Armenian and Russian. As it turns out, the newspaper contains interesting information related to France and the French language. This refers in particular to the names of hotels, cinemas, and shopping malls in French or named after French cities, which allows us to conclude that French motifs were widely expressed in the everyday life of Yerevan residents. It should be noted that from this perspective, there has never been any reference to the “Yerevan Announcements” newspaper.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1879-1917 թթ., Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1963 թ., 607 էջ:
2. Эриванские объявления, 1911 г., N 5:
3. Эриванские объявления, 1911 г., N 31:
4. Эриванские объявления, 1909 г., N 10:
5. Эриванские объявления, 1911 г., N 48:
6. Эриванские объявления, 1911 г., N 60: